Կարգապահական գործ թիվ ԿԳ-24173

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԳՐԵՏԱ ԳԱՌՆԻԿԻ ՌԱՄԱԶՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վահագն Քեշիշյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի և Կարեն Խալաթյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ Անուշ Վազգենի Թունյանի և փաստաբան Գրետա Գառնիկի Ռամազյանի,

քննության առնելով փաստաբան Գրետա Գառնիկի Ռամազյանի **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 370), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Անուշ Թունյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է, որ 2024 թվականի հուլիսի 7-ին դիմել է փաստաբան Գրետա Ռամազյանին ժառանգության հետ կապված խնդրով: Մասնավորապես, փաստաբան Գրետա Ռամազյանին հայտնել է, որ օրենքով սահմանված ժամկետում դիմում է ներկայացրել նոտարին իր հոր ժառանգությունը ընդունելու վերաբերյալ, սակայն չի ստացել ժառանգության վկայագիր, իսկ հետագայում պարզել է, որ ժառանգության վկայագիր է տրվել միայն Վաչագան Թունյանին:

Դիմողը պնդել է, որ փաստաբան Գրետա Ռամազյանին վճարել է 150.000 ՀՀ դրամ, սակայն վերջինս իր հետ չի կնքել ծառայությունների մատուցման պայմանագիր:

Դիմողը նշել է նաև, որ փաստաբան Գրետա Ռամազյանը երկու ամիս որևէ գործողություն չի կատարել, որի արդյունքում ինքը հրաժարվել է փաստաբան Գրետա

Թիվ ԿԳ-24173-2-Ա
12.03.2025թ.

Ռամազյանի ծառայություններից և խնդրել է վերադարձնել գումարի այն մասը, որի դիմաց աշխատանք չի կատարվել, ինչպես նաև իր գործին առնչվող փաստաթղթերը:

Դիմողը հավելել է, որ փաստաբան Գրետա Ռամազյանի կողմից կազմված հայցադիմումի հիմքում ընկած փաստերը հանգել են նրան, որ ըստ էության վիճարկում է նոտարի կողմից ժառանգության վկայագրի տրման գործողությունը, որն ընդդատյա է վարչական դատարանին, այլ ոչ ընդհանուր իրավասության, ինչպես նշվել է հայցադիմումում:

Արդյունքում, Դիմողը խնդրել է փաստաբան Գրետա Ռամազյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 21.11.2024 թվականին Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 27.11.2024 թվականի բացատրությամբ պնդելել է նախկինում ներկայացված դիրքորոշումը՝ հաստատելով, որ Փաստաբանը որևէ գործողություն չի կատարել և չի կնքել պայմանագիր:

Բացատրությանը կից Դիմողը ներկայացրել է 27.08.2024 թվականի ստացականը, 02.07.2024 թվականի վկայագիր՝ փաստաբանական ծառայություն մատուցելու համար:

Հանձնաժողովի նիստի ընթացքում, Դիմողն ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը, հավելելով, որ չի ստորագրել պայմանագիր:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Գրետա Ռամազյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Անուշ Թունյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը Պալատին 22.10.2024 թվականին ներկայացված բացատրությամբ հայտնել է, որ ինքը՝ որպես փաստաբան, Դիմողին պետք է տրամադրեր խորհրդատվություն, փաստաթղթերի հավաքագրում և հայցադիմումի կազմում, ինչը բարեխղճորեն կատարել է:

Փաստաբանը նշել է, որ կողմերի միջև կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր և Դիմողը վճարել է պայմանագրով սահմանված գումարը:

Փաստաբանը բացատրությանը կից ներկայացրել է ծառայությունների մատուցման պայմանագրի պատճենը:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 21.11.2024 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 10.12.2024 թվականի բացատրությամբ ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը՝ հավելելով, որ Դիմողին ծառայություններ է մատուցել դեռևս 09.07.2024 թվականից մինչև օգոստոս ամսվա կեսերը, 3 գործերով:

Փաստաբանի պնդմամբ, նա կատարել է հարցումներ, ուսումնասիրել է փաստաթղթերը, սակայն Դիմողը վճարել է միայն մեկ հայցապահանջի համար:

Փաստաբանը նշել է, որ 09.07.2024 թվականին կնքված պայմանագրի շրջանակներում հավաքագրել է փաստաթղթեր, կազմել է հայցադիմում, որը ցանկացել է հանձնել Դիմողին, սակայն վերջինս ցանկացել է դրանք ստանալ 24.08.2024 թվականին, երբ Փաստաբանը մասնակցել է երկօրյա սեմինարի (գիշերակացով):

Փաստաբանը բացատրությանը կից ներկայացրել է նախկինում ներկայացված բացատրության, 09.07.2024 թվականի պայմանագրի, հայցադիմումի և այն կից փաստաթղթերով Դիմողին ուղարկելու փաստը հավաստող փոստային անդորրագրերը, ինչպես նաև վճարման անդորրագիրը:

Հանձնաժողովի նիստի ընթացքում Փաստաբանն ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը՝ հավելելով, որ Դիմողին տրամադրված հայցի բովանդակության հաշվառմամբ այն կարող էր ներկայացվել նաև ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 30.10.2024թ. թիվ 385-Ա/ԿԳ-24173 որոշմամբ փաստաբան Գրետա Ռամազյանի նկատմամբ **Օրենքի** 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև **Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 2.7.1, 2.7.2, 3.5.5 և 3.8.4 (1), (3) ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

05.11.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից Հայկ Ծատուրյանին (**այսուհետ նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 03.01.2025թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-6 կետերում նշված փաստերը:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել՝ 19.02.2025թ. ժամը 19:30-ին, 12.03.2025թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը՝ Դիմողի հոր ժառանգության գույքի վերաբերյալ գործով: ***Նշված փաստը հաստատվում է*** *Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, Փաստաբանի կողմից ներկայացված 09.07.2024 թվականի պայմանագրով, ինչպես նաև 09.07.2024 թվականի վճարման անդորրագրով:*

2. Փաստաբանն իրեն տրված հանձնարարության շրջանակներում կազմել է հայցադիմում, որին կից փաստաթղթերի շարքում առկա են եղել ժառանգական գույքի կադաստրային գործի պատճենները, ինչպես նաև կադաստրային գործի էլ.կրիչը: ***Նշված փաստը հաստատվում է*** *Փաստաբանի բացատրությանը կից ներկայացված հայցադիմումով:*

3. Դիմողի շահերի պաշտպանության համար Փաստաբանի կողմից կազմված հայցադիմումով Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանին ներկայացվել է պահանջ առ այն, որ Դիմողը ճանաչվի ժառանգությունն ընդունած ժառանգ՝ անվավեր ճանաչելով նոտարի կողմից տրամադրված ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա կատարված պետական գրանցումը, ինչպես նաև առքուվաճառքի պայմանագիրը: Նշված պահանջի հիմքում դրվել են այն փաստերը, որ 18.12.2007 թվականին Դիմողի հոր մահից հետո նա 16.05.2008 թվականին դիմել է ՀՀ Լոռու մարզի Թումանյանի նոտարական գրասենյակ՝ ժառանգությունն ընդունելու համար, որը գրանցվել է սեղանամատյանի թիվ 797 համարի տակ, իսկ 19.07.2024 թվականին ՀՀ կադաստրի կոմիտեից տեղեկացել է գույքը Դիմողի եղբոր անվամբ գրանցվելու և 19.04.2024 թվականին վաճառվելու մասին: ***Նշված փաստը հաստատվում է*** *Փաստաբանի բացատրությանը կից ներկայացված հայցադիմումում:*

4. Դիմողը ՀՀ վարչական դատարան ներկայացրել է հայցադիմում՝ ՀՀ Լոռու մարզի Թումանյան նոտարական տարածքի նախկին նոտար Սամվել Մայիլյանի կողմից 12.02.2010թ. տրված ժառանգության իրավունքի վկայագրի տրմանն ուղղված գործողություններն ոչ իրավաչափ ճանաչելու և հետևանքների վերացման պահանջի մասին: ***Նշված փաստը հաստատվում է*** *«Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում թիվ ՎԴ6/0906/05/24 վարչական գործի վերաբերյալ առկա տեղեկություններով:*

5. Հանձնարարությունն ավարտվել է հայցադիմումը կազմելով և կից փաստաթղթերով Դիմողին հանձնելով: ***Նշված փաստը հաստատվում է*** *Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, Փաստաբանի կողմից ներկայացված 09.07.2024 թվականի պայմանագրով:*

6. Փաստաբանը հանձնել է հայցադիմումը և կից փաստաթղթերը Դիմողին: ***Նշված փաստը հաստատվում է*** *Փաստաբանի կողմի տրամադրված 28.08.2024 թվականի թիվ LO124183555AM փոստային անդորրագրով, ինչպես նաև Դիմողի կողմից տրամադրված 27.08.2024 թվականի ստացականով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Գրետա Գառնիկի Ռամազյանը փաստաբան է հանդիսանում 16.03.1999 թվականից, և 2020-2025թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Գրետա Գառնիկի Ռամազյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.1, 2.7.2, 3.5.5 և 3.8.4 (1), (3) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններ իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և

Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում ոչ միայն փաստաբանի կողմից որոշակի վարքագծի դրսևորման հանգամանքը, այլ նաև դրսևորվող վարքագծում Օրենքով և/կամ Կանոնագրքով ամրագրված պահանջների հնարավոր խախտման հատկանիշների առկայության հանգամանքը, որի պայմաններում միայն Հանձնաժողովը կարող է քննարկել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Այս համատեքստում, Կանոնագրքի մի շարք դրույթների կիրառելիությունը ևս ինքնանպատակ չէ և Հանձնաժողովի կողմից այդ դրույթներով ամրագրված պահանջների հնարավոր խախտման հատկանիշների համատեքստում փաստաբանի վարքագծի քննարկման իրավական հնարավորությունն ուղղակիորեն փոխկապակցված է որոշակի պայմանների առկայության կամ բացակայության հետ:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի և/կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Տվյալ դեպքում, Դիմողն ըստ էության Փաստաբանին վերագրում է վերագրում է ոչ բավարար մասնագիտական ձեռնհասություն ցուցաբերելու, իրեն բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու, չմատուցված ծառայությունների դիմաց վճարված հոնորարը և փաստաթղթերը չվերադարձնելու վարքագիծը:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.1 ենթակետի համաձայն՝ *փաստաբանական գործունեության հասարակական-իրավական նշանակությունը փաստաբանից պահանջում է բարձր մասնագիտական պատրաստվածություն, օրենսդրության իմացություն և գործնական փորձ, փաստաբանական գործունեության մարտավարության մեթոդների և միջոցների, ինչպես նաև հռետորական արվեստի տիրապետում:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Կանոնագրքի 3.8.4 (1) (3) ենթակետերի համաձայն՝ *պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝*

վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ

...

վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը (փաստաբանը կարող է այդ փաստաթղթերի պատճենները պահպանել):

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Ըստ այդմ, փաստաբանի համար սահմանվում են մի շարք պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը: Նշվածը ենթադրում է, որ փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար: Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Միևնույն ժամանակ, վճարովի հիմունքներով ծառայություն մատուցելու դեպքում փաստաբանի հետ կնքված պայմանագիրը պետք է բովանդակի ինչպես հոնորարի չափը և վճարման կարգը, այնպես էլ հանձնարարության բնույթը և ծավալը (ատյանը, փուլը և այլն) կամ այն որոշելու չափորոշիչները: Իսկ պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝ վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից

լիազորված անձին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը, ինչպես նաև հոնորարի այն մասը, որի դիմաց ծառայություն չի մատուցվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը՝ Դիմողի հոր ժառանգության գույքի վերաբերյալ գործով:

Նշվածի կապակցությամբ Փաստաբանն իրեն տրված հանձնարարության շրջանակներում կատարել է հարցումներ, կազմել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանին հասցեագրված հայցադիմում, որին կից փաստաթղթերի շարքում առկա են եղել ժառանգական գույքի կադաստրային գործի պատճենները, ինչպես նաև կադաստրային գործի էլ.կրիչը: Նշված հայցադիմումով դատարանին ներկայացվել է պահանջ առ այն, որ *Դիմողը ճանաչվի ժառանգությունն ընդունած ժառանգ՝ անվավեր ճանաչելով նոտարի կողմից տրամադրված ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա կատարված պետական գրանցումը, ինչպես նաև առուվաճառքի պայմանագիրը:*

Հետագայում, Դիմողի և Փաստաբանի միջև 27.08.2024 թվականին կազմվել է ստացական, որով Փաստաբանը հանձնել է հայցադիմումը և կից փաստաթղթերը Դիմողին, ինչի հաշվառմամբ ծառայությունը համարվել է մատուցված:

Հանձնաժողովը, համադրելով վերը վկայակոչված նորմերն ու դրանց հիմնավորումները սույն կարգապահական գործով հանգամանքներին, հարկ է համարում արձանագրել, որ չնայած Դիմողն ըստ էության հերքում է Պայմանագրի կնքման հանգամանքը, այնուամենայնիվ, սույն գործի քննության ընթացքում մատուցվող ծառայությունների ծավալի մասով Դիմողը փաստացի չի ներկայացրել որևէ առարկություն, որպիսի պայմաններում Հանձնաժողովը գալիս է այն եզրահանգման, որ Փաստաբանի կողմից մատուցվող ծառայությունները ավարտվում էին հայցադիմումի կազմմամբ և այն Դիմողին հանձնելով, ինչն էլ փաստացի տեղի է ունեցել:

Ըստ այդմ, քննարկելով Փաստաբանի կողմից բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալու և բավարար մասնագիտական ձեռնհասություն ցուցաբերելու հարցերին, Հանձնաժողովը հարկ է համարում նշել, որ տրված հանձնարարության շրջանակներում Փաստաբանը կատարել է որոշակի գործողություններ Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանության կապակցությամբ:

Մասնավորապես, ստացել է վիճելի գույքին վերաբերող կադաստրային գործը, ինչպես նաև առկա հանգամանքների հաշվառմամբ կազմել է հայցադիմում, որով պահանջել է Դիմողին ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ՝ անվավեր ճանաչելով նոտարի կողմից տրամադրված ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա կատարված պետական գրանցումը, ինչպես նաև առուվաճառքի պայմանագիրը:

Այս համատեքստում, նկատի ունենալով, որ բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալու հանգամանքը որոշակիորեն փոխկապակցված է նաև Փաստաբանի մասնագիտական ձեռնհասության հետ, Հանձնաժողովը հարկ է համարում նշել, որ թիվ ԵԿԴ/1274/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանը, վերահաստատելով նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումը, արձանագրում է, որ

«...ժառանգության իրավունքի վկայագրի վիճարկման հայցապահանջի ենթակայությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե այդ պահանջի հիմքում արդյոք ընկած է նոտարական գործողությունների վիճարկման փաստարկը, թե՝ ոչ: Այլ կերպ ասած, այն դեպքում, երբ ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջի հիմքում դրված է նոտարական գործողությունների վիճարկումը, ապա այն ենթակա է քննության վարչական դատարանի կողմից՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով:...»:

Վերոգրյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը փաստում է, որ Փաստաբանի կողմից կազմված հայցադիմումը՝ դրա իրավական ու փաստական հիմքերի, ինչպես նաև պահանջի հաշվառմամբ, կարող էր հասցեագրվել ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան, սակայն ի վերջո չի ներկայացվել դատարան Դիմողի կողմից:

Անդրադառնալով հանձնարարության ավարտից հետո դրա կատարման ընթացքում Փաստաբանին հանձնված և նրա կողմից ձեռք բերված փաստաթղթերը, ինչպես նաև ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել Դիմողին վերադարձնելու հարցին՝ Հանձնաժողովը նախ փաստում է, որ Փաստաբանին տրված հանձնարարությունը սահմանափակված է եղել հայցադիմումի կազմմամբ: Այլ կերպ ասած, Փաստաբանը հայցադիմումը կազմելուց և այն Դիմողին հանձնելուց բացի չուներ որևէ այլ աշխատանքի կատարման պարտավորություն, ինչը անհրաժեշտ պայման է Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի 1-ին պարբերությամբ սահմանված կարգավորման կիրառման համար, քանի որ խոսքը բոլոր դեպքերում գնում է բացառապես գումարի մի մասի վերադարձնելու մասին, որն ուղղակիորեն կապված է Փաստաբանի կողմից մատուցվող ծառայությունների ծավալի հետ:

Բացի այդ, 27.08.2024 թվականին Դիմողի և Փաստաբանի միջև կազմված ստացականի բովանդակության համաձայն՝ Դիմողին փոխանցվել են գործին վերաբերող բոլոր փաստաթղթերը: Ավելին, փաստաթղթերը Դիմողին ուղարկվել են նաև փոստային ծառայության միջոցով, ինչի կապակցությամբ առկա է թիվ LO124183555AM փոստային անդորրագիրը՝ Փաստաբանի՝ որպես ուղարկողի և Դիմողի՝ որպես ստացողի նշմամբ, ինչպես նաև նշված համարով առաքանին 29.08.2024 թվականին Դիմողի կողմից ստացված լինելու վերաբերյալ ծանուցագիրը, ինչը ևս վկայում է այն մասին, որ Դիմողին հանձնվել են վերջինիս գործին վերաբերող փաստաթղթերը:

Հաշվի առնելով ողջ վերոգրյալը՝ Հանձնաժողովը, գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրությունները և դրանց կից ներկայացված փաստաթղթերն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ սույն կարգապահական գործի շրջանակներում բացակայում են փաստաբան Գրետա Գառնիկի Ռամազյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Գրետա Գառնիկի Ռամազյանի (արտոնագիր՝ թիվ 370) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.1, 2.7.2, 3.5.5

և 3.8.4 (1), (3) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-24173 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-24173-2-Ա
12 մարտի 2025թ.
ք.Երևան